

«ԲԵՆԱԿԱՆ ՍԱՐԴՈՒ» ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍԱՏԵՂԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

Հ. Խաչատրյան

Համաստեղի գրականության առանցքը մարդն է հողի, աշխարհի և երկինքի հետ հարաբերություններով: Նա գյուղը, գյուղացուն կտրում է սոցիալական խնդիրներից և հարցերը քննարկում համամարդկային ենթատեքնուով՝ ուշադրության կենտրոնում պահելով ազգային հոգեբանության ամենատարբեր դրսերումները: Նրա համար մարդը, անկախ ազգային պատկանելությունից, առաջին հերթին մարմնավորում է հող ու հողից ծնված կենսափիլիսոփայություն: Այսպես ասած «բնական մարդը» (Հ.Օշականը գրում է՝ «մախնական մարդ», Վ.Շուշանյանը՝ «լրի մարդ») ազգային հոգեբանության, ազգային խառնվածքի կրողը չէ միայն՝ ապրում է բնության օրենքներով: Համաստեղի գրականության հերոսը մարդն է՝ բնության հետ կապով, բնության ծայնով ապրելու ջանքերով: Նրա պատկերած գյուղում կան հարուստ և աղքատ, բայց չկան (գրեթե չկան) կյանքի սոցիալական ենթաշերտեր:

Պատճառը միայն հիշողության գործոնը չէ: Գրողին հետաքրքրում է այն ամենը, ինչը ներկայացնում է «ներքին մարդուն», այսինքն՝ մարդուն, որպես Երկինք-երկիր կապի անքակտելի մաս և աշխարհը հասկանալու բանալի: Համատեղի գրականության հերոսը հայրենի եզերքում ապրող, արարող հայ զյուղացին է, որն օտար ափերում է և ի նորանում առաջ է:

«Գիտը»¹ և «Անձրկը»² պատմվածքների ժողովածուները ներկայացնում են Համաստեղի ստեղծագործական աշխարհի հիմնական թեմաները՝ բնույթուն, զյուղաշխարհ, աշխարհավեր փոթորիկ ու որպես դրա հետևանք՝ գյուտնման կրիվ օտար ափերում։ Այս ամենի վրա թեածում են կարոտի, հույսի, երազի ճերմակ աղավնիները։ Նա նկարագրում է հայ գասական գրականության ավանդական ու ավանդապահ գյուղը՝ մարդկային մեծ ու փոքր ողբերգություններով, քաղաքական, սոցիալական, ազգային մեծ խնդիրների, հարցերի անդրադարձն անհատի ճակատագրի, հոգերանության, վարքագծի վրա։ Պատկերն ամրողանում է առանձին դրվագների համապրությամբ, իսկ ամեն մի դրվագ գրողը կերտում է խնամքով, հմտորեն։ Համաստեղի գրականության հիմնահարցը արարող մարդու և ուժի «փրավունքով» ասպրոդ մարդակերպ Էակի հակադրությունն է։ Տասնամյակների հեռվից, բնականարար, գյուղը և աշխատավորը ինչ-որ չափով իդեալականացվում են. հիշողությունը ջնջում է ավելորդ մանրամասները, հերոսների բնավորության գծերը խոշորանում են, ընդգծվում։ Այսպես՝ «Տափան Մարգար»ի հերոսը կրվար ոչ իրական մարդ, եթե պատմվածքում շեշտված չլինեին հեղինակի մանկական տպակորությունները։

Գյուղի բնակչները բնությանը ծովզած մարդիկ են, և բնությունը օժանդակում է նրանց ներաշխարհի բացահայտմանը, վարքագծի մեկնարանմանը: Փիլիկի անսահման բարությունը Համաստեղը նկարագրում է ամեն մի անցորդի իր բերքից ու հովանուց բաժին հանող ծառի հետ համենասության միջոցով («Փիլիկ աղքար»): Պատմվածքի ավարտը լրացնում է հերոսի լրվածության պատկերը. անհոգի մարդիկ Փիլիկին իրենց հավասարը չհամարեցին, իսկ կենդանիները Համաստեղի պատմվածքում դառնում են հոգևոր էակներ. այս միջոցով է գրողը պատժում գյուղացիներին: Նա չի բննում մարդկանց անտարքերության արմատներն ու պատճառները, իսկ Փիլիկն իր անձնազոհ մարդասիրությամբ հակադրվում է շահի ու շահամոլության հոգեբանությանը, բարձրանում միջավայրից, առանձնանում, դառնում գրեթե անիրական: Ակնհայտ է հիսուս Քրիստոսի և Փիլիկի նմանությունը. նոյն անմնացորդ նվիրումը մարդկանց, անսահման բարությունը կենդանի ամեն արարածի նկատմամբ, չհասկացվելի ու վտարվելը մարդական հանրությունից, որն արդարանալու մեկ միջոց ունի մարդիկ չեն գիտակցում արածը: Փիլիկն էլ կարող էր կրկնել հիսուսի խոսքերը. «Հայո, թո՞ղ դրցա. զի ո՞չ գիտեմ՝ զի՞ն գործեմ» (Ավետարան ըստ Շուկասու, 23:34):

«Երիաթի մատանին» պատմում է Համաստեղի ստեղծած հետաքրքիր տիպերից մեկի՝ հարբեցող Խորիկ Ակոյի մասին (սովորաբար հարբեցողները նրա երկերում գևուն): Օղին Ակոյի յուրահատուկ կապն է աշխարհի ու մարդկանց հետ. հայրած Ակոն մարմնացյալ բարություն է: Գյուղի երեխաները երազում են հարսության, իրեղեն ճիռ մասին, իսկ Խորիկ Ակոյի որդին նվիրական մի ցանկություն ունի՝ միշտ օղի բերել հոր համար: Ծիծաղելին ու ողբերգականը միաձուլվում են, և ընթերցողի դեմքին գծագրվում է արցունքախառն ժախտը:

Մարտիկի երազանքն սկսվում է դաշտի, արևածաղկի ուկեգույնից, սերմնացան նշանածի լայն ու արձակ թևերից, նրա ցանած հունտերից ու դառնում ծով երջանկության ապահով՝ առօրին Մուրասի

գոգնոցի վրա քիստեր է ասեղնագործում («Համբույր»): Կարո Մարտուազը, որն ապրում է պապերի օրենքներով, հնարավոր բոլոր միջոցներով դիմադրում է «ապաֆրանկայի» ավերիչ ներգործությանը, երանությամբ է հիշում անցած օրերը, երբ «նամուս կար, ամեն մարդ իր նամուսին տերն էր»: Ավանդական օրենքների ամեն մի աննշան խախտում լի է ողբերգական հետևանքներով: Շիրվանզադեի «Նամուսի» Բարխուդարի պես Կարո Մարտուազն էլ ծանր ողբերգություն է ապրում, երբ լսում է աղջկա՝ Մարուշի և նրա փեսացուի՝ Մուրադի հանդիպման մասին: Նամուսի գերի մարդը որոշում է գոհաքերել աղջկա երջանկությունը, փրկել իր պատիվը: Ծանր սյուժեն այս դեպքում ունի անսպասելի երջանիկ ավարտ: Համաստեղին չեն հետաքրքրում սոցիալական, կենցաղային հարցերը, հնի ու նորի պայքարը: Համառ զյուղացու հետաքրքիր տիպ է Կարո Մարտուազը, որը հոգեբանական երկվություն է ապրում: Մի կողմից չի կարող ներել դատեր համարձակությունը, մյուս կողմից՝ պապիկ դառնալուց հետո (դայակի վկայությամբ՝ բոռնիկը շատ է նման իրեն) երջանկության տարօրինակ ու անհասկանայի զգացում ունի: Մի օր էլ հանկարծ հասկանում է, որ այդ երջանկության, մշտական լավ տրամադրության պատճառը ... բոռնիկն է, որի մասին գրեթե ամեն երեկո պատմում է կիմը: Կատարվում է տպրական հրաշքը. մի օր էլ պապը տեսնում է աղջկան ու բոռնիկին: Համաստեղը կարեկցում է իր հերոսին. աշխարհում ինչքան լավ բան կա, որ չի տեսել և չի վայելել այս մարդը: Գրողը նրան պարզեցում է. բոռնիկը կա որպես Կարո Մարտուազի, նրա միջոցով՝ նաև հայության գլուրյան հաստատում: Նուրբ ու քննուշ էակ է Մարուշը, որը հոգու աներևակայելի ուժով դիմադրում և հաղթում է ադաքին՝ հավատարիմ մնալով երջանկության բնածին իրավունքին: Գրողն ուշադրության կենտրոնում է պահուսու քե Մարուշին, այլ նրա հորը՝ կարծես ցանկանալով հնարավոր ամեն միջոցով պաշտպանել հայ կնոջ՝ երջանիկ լինելու իրավունքը, որի դեմ լեռնամում է ավանդականը: Կյանքի տրամարանությամբ և «քնական մարդու» պաշտպան գրողի ցանկությամբ հաղթում է սերը:

Խաչիկը հմայված է աղավնիների թոշքով, Կապուտիկին տեր դառնալու համար պատրաստ է ամեն մի զոհաբերության («Աղավնիները»): Ծնողները փորձում են սթափեցնել, խելքի բերել որդուն. հայրը հիշում և հիշեցնում է Զաքարի աղավնիների պատճառով գյուղը պատուհասած սովի, աղավնիների հիվանդանալու և Զաքարի ինքնասպանության մասին: Գյուղը գգուշավոր սպասում է: Վատ կանխազգացում ունի նաև ընթերցողը: Դեպքերի վախճանը ողբերգական է: Աղավնու ազատ թոշքը չի համատեղվում կոչտ ու դաժան օրենքներին, որոնցով ապրում են մարդիկ: Խաչիկնց տան կտորին «ամենօրի անս» մնում է աղավնատան ավերակը՝ որպես ղթախտության խորհրդանշ:

Վ. Թորովենցի «Աղավնիները» ակնհայտ աղերսներ ունի Համաստեղի համանուն պատմվածքի հետ: Թորովենցի պատմվածքում տիրականը միջավայրն ու ավանդական օրենքներն են, թանձը ու մոռայլ են գրողի ներկապնակի երանգները, չկա հույսի ոչ մի շող, պատմողի մանկական երազանքն է միակ լուսավոր պահը: Համաստեղի պատմվածքում ոչ պակաս բանձր գույներով են ներկայացված գյուղը և գյուղացիները, բայց հատուկ ընդգծված է մարդու երազով, հեքիաթով ապրելու բնածին իրավունքը: Գյուղի՝ նմանը չունեցող կապույտ երկնքում սավառնող աղավնիները անցյալի և անցածի անքաժան մասն են՝ ներկված հուշի ու հիշատակի նորերանգներով, որոնց մեջ տարիների ընթացքում կամաց-կամաց խամրում են սևն ու կարմիրը: Ե՛վ Համաստեղը, և՝ Թորովենցը «աղվընիկ խաղցնող» իրենց հերոսների մեջ տեսնում են «հարուստ ու խոր մի հուզաշխարհ, որի կենտրոնական, ամեն ինչ իր շուրջը հավաքող մեղեղին սիրո զգացմունքն է», իսկ պատմվածքը «մտնում է ընդարձակ դաշտ, որ ավելի վեպի մասշտաբն է»:⁴ Հերոսները կործանվում են, բայց միշտ կա մեկը, որի միտքն ու սիրտը չեն կտրվում աղավնիների բոլիքից: Համաստեղի պատմվածքում Խաշիկի որոյին, Թորովենցի պատմվածքում պատմողն ինքը: Համաստեղի պատմվածքներում չկա հերոսների և միջավայրի հակադրություն, չնայած նրանցից շատերը միջավայրի գոհերն են: Գրողի ուշադրության կենտրոնում հոգերանական հարցերն են, և հակադրությունը կյանքում գործող, ամեն ինչ կանխավ որոշող օրենքների և հերոսների՝ երազով ապրելու բնական զանկության անհնարինության միջն է:

Համաստեղը դիպուկ մի պատկերով հոգեբանորեն հիմնավորում է հերոսների արարքները, և նրանք ընթերցողի համար դառնում են կենդանի մարդիկ: Այսպես՝ կնօցք կորցրած Մխահին վախսենում է մենակուրյունից և ուշադրությունը կենտրոնացնում հարևանութեա՝ այրի Սնուշի վրա («Երբնեկ այն օրերուն»): Գրողը նույնափառ նրանկատությամբ հիմնավորում է Սնուշի վարքագիծը. նրանց ամենօրյա ու հարևանների համար անբացատրելի կրիվները դառնում են սովորական, քիչ-քիչ վերածվում թշնամության:

Խկսվում են տեղահանության օրերը: Երեք օր անց հանդիպում են նաև Մխարին ու Սնուշը: Չուսապ, թանձը գոյներով է Համաստեղը ներկայացնում մեր ազգային ողբերգությունը: Ոչ մի ավելորդ բառ մեկ-երկու մանրամասն ամբողջացնում են ասելիքը: Քարավաններ ճգկեցին դեպի աշխարհի շորս ծագերը, իսկ հողը մնաց մենակ, առանց տիրոջ: Գյուղացին անրաժան է տնից, հողից: Ծամփաները նման տանում են օտար երկրներ, բայց մտովի գյուղում է, տանը: Անմոռանայի է այն պատկերը, երբ

Եղեռնի արյունոտ ճամփին հանդիպած համագյուղացուն հողագործը հարցնում է լքած բանջարանոցի, կորցրած բանալու մասին:

Համաստեղի Գյուղը հերիարի ու երազի այն աշխարհն է, որտեղ նապաստակն ու շուն էլ բասար տեղծական երևակայություն ունեն (*«Նապաստակի մը օրագիրը»*, *«Չալո»*): Ծովական կախարդական մի մտերմությամբ կապված է լուսնին ու մարդկանց, որոնց հավատարմորեն ծառայել է տարիներ շարունակ, դարձել գյուղի երեխաների խաղընկերը: Հետաքրքիր և արկածներով լի կյանք է ապրել Չալոն (այո՛, ապրել), կարող է մարմնի վերքերը ցույց տալ, իր կյանքի հերիարը պատմել՝ հակառակ շատ մարդկանց, որոնց կյանքը՝ միօրինակ է ու ծանծրավի: Մարդիկ վիրավորեցին շանը, և նա փախավ գյուղից, սովոր կատաղեց, վայրենացավ, բայց չկորցրեց մարդկանց նկատմամբ անսահման նվիրվածությունը: Ծովական գողերից վրկեց Գորանենց լավագույն եզրը: Փրկեց իր կյանքի գնով: Անձնազորհության այս որակին ընդունակ է միայն ազատ բնության ազատ զավակը՝ Չալոն՝ շնայած մեջքին կրում է մարդկանց մահակմերի և մսավաճառի դանակի վերքի հետքերը: Մարդիկ դառնացրել են շամ հոգին, բայց չեն վշտել, - սա է Համաստեղի եզրակացությունը: Պատմվածքի վերջում ընթերցողն ակամա շարունակում է հեղինակի՝ մարդկանց և շամ համեմատությունը, որը, ոժքախստաբար, հօգուտ առաջինների չէ: Ակամա կրկնում ես Համաստեղի հերոսի խոսքերը. «Մարդիկ ահավոր էն ու զարհութելի, իմ բարի Անտոնիոս»:⁵

Ի՞նչքան քիչ բան է պետք, որ թևակորվի Թորիկ Պետոյի հոգին, իմաստավորվի ծերումու քրտնաքրը աշխատանքը («Աղջի Եղիկ»): Խող ողջ գյուղն իմանա զաղտնիքը, թող բոլորը ծիծաղեն իր ուշացած սիրո վրա, ծերումին չի կարող Եղիկին չպատմել ծաղկած արտի մասին. այդ ծաղիկների հետ են կապված իր կարուն ու երազը, սերն ու երջանկության հոլոյք: Ինչպես Ստ. Զորյանի «Խնճորի այգու» Մարտին ապերը ծառերի, այնպես էլ Պետոն Եղիկի արտի հետ «իր սիրտն էր կապեր» (196): Համատեղը ծալ-ծալ բացում է հերոսի հոգու շելտերը՝ ոզնորությունը, անսովոր եռանձը, Եղիկին ամեն օր տեսնելու, նրա ծայնը իր աղոքքին խառնվելը և անգամ Կոփած Կարոյի խոսքերը:

Համաստեղի Գյուղում կատակն ու ողբերգականը գիրկրնդիսառն են ճիշտ այնպես, ինչպես հաճախ լինում է կյանքում («Փեսա Օվան», «Տունը»): Օվանի կյանքում խառնվում են չքավորությունն ու տոնական հազուսարը: Աղքատությունը դրանով չքերևացավ, բայց անմահացավ պահը: «Թումանյանական հումորն ընդհանրապես ծիծաղելի և ցավալի է միաժամանակ», - գրականագետ Էդ. Զրբաշյանի այս դիպուկ բնորոշումով կարելի է բնութագրել Համաստեղի հումորը՝ մտերմիկ ու բարեհոգի:

Գյուղի, բնուրյան նկարագրության շատ հատվածներ գեղանկարի, գունանկարի տպավորություն են քողնում: Հիշենք «Անձրկի» գարնանային համայնապատկերը. հորիզոնը վառվում է չոր ցորենի խրձերի վառ կարմիր կրակով, լեռների կապույտ լանջերին փովում են հողի մշակմերի ու հումկու եղների հսկա ստվերները: Ծագող արևի առաջին շողերը խաղում են այս գույների հետ, անվերջ հարստացնում նրբերանգմերը... Կայդում ես և ակամա հիշում Ակսել Բակունցի «Լառ-Սարգար» պատմվածքը. գունային զգացողության, բնապատկերի կառուցման, շարժման ու գյուղաշխարհի գեղեցկությունների ընկալման զարմանայի զուգաղիպարություն, որ կարող էին ունենալ միայն հոգեկան աշխարհի նմանություն ունեցող մարդիկ, առավել ևս՝ գրողները: Համաստեղի պատմվածքում լուսարացի այս զարբոնքի պատկերը հակադրվում է Թորիկ Դուկասի ողբերգությանը. Տիքքը եզր ծեր է և շարժվում է «երկրաշարժեն օրորվող լեռան մը պէս» (173): Արևն էլ է բշնամի, երբ անձրևն ուշամում է: Հասկը հողագործի համար շնչավոր էակ է, որը խնամքի, ջրի կարիք ունի: Օրեր անց անձրևի տիեզերական ցնցուիդ տակ ուրախ պարում են հասկերն ու հողագործը: «Սիրում եմ անձրևը...», - Վ. Անանյանի պէս կարող է ասել Գյուղի ամեն մի բնակիչ, իսկ Համաստեղը՝ կրկնել Վ. Շուշանյանի տողը.

... Միրած եմ միշտ անձրևին բանաստեղծությունը ...
«Քնական մարդու» աշխարհի խորհրդավոր բնակիչներն են աղվեսը, ծիու քուտակը՝ հովատակի ու մատակի կողքին, «ախիրը և այս ամենի տեր ու տիրակալ հրսկա նախրապանը՝ Փճի Սկզն («Չոպան լեռան հերիաքք»): Այդ կախարդական աշխարհը հերիաքի պես մնացել է հեղինակի հիշողության մեջ: Չոպան Սկոյի պատմած հերիաքն ընդհատվում է ցուլի բառաչով, իսկ վերջում լեռան «հերիաքունակ» ապառաժները կենդանիների, «Երկնքի ու Աստծու դեմ, հսկայի մը պես կանգնող» չորանի կերպարանը են առնում, և պատկերը լրացնում է «լեռան մը պես հումկու ու շնորհալի» ցուլը: Հերիաքն ու իրականությունը ծովագում են, որ ապրեն հեռու մի լեռնաշխարհում և այդ լեռնաշխարհի զավակներից մեկի հիշողության մեջ: Հոգ չէ, որ այդ հերիաքը արդեն այնքան հեռու է լեռնաշխարհից: Երազի, հերիաքի շնչով, բայց իրական մարդիկ և իրական գյուղ է նկարագրում Համաստեղը, որ պահպանի «քնական մարդու» ազգային հոգեբանության ակունքներից ամենազորեղը՝ հողին կառչած, հողով ապրող գյուղն ու գյուղացուն: Մարդու, հայի այդ տեսակի գոյության իրավունքի պաշտպանն է գրողը, որին աջակից են դասական և ժամանակակից հայ գրականության շատ ներկայացուցիչներ: Ժամանակի, բարքերի մշտահոլով շրջապտույտում հողը, հողագործի հոգեբանությացուցիչներ:

ունը ժողովուրդների ազգային ինքնության հիմքերից են, չափասիշ դարձած արօսք, որու զռութան մարդն ու նրա գործը:

Վարդանն ապրում է Երազով, իրական լյալքուն տասահ գամայք ողջ սեղանը և պահանջակա լի («Վարդան»): Մի պահ միայն ջնջվում է Երազի և իրականության սահմանը, երբ սենյակ մտնում արքած Շինան: Համաստեղի՝ հոգով ուժեղ, հողի հետ հոգլոր կապերը շտրած հերոսների համար ազգը լիովի բափարար է ապրելու համար, իսկ Վարդանի դեպքում կասկածը խտանում է. հերոսի սպն անցյալի հետ սուկ խոսք է՝ կրկնվելուց ոչ հավաստի, մաշված (արևելյան իմաստուն մի ացգածք պնդում է, որ հավաստի է մեկ անգամ ասվածը, կրկնվողը՝ կասկածելի, իսկ երրորդ անգամ ասվածը՝ անհավատալի): Համաստեղը փոքր ծավալում ստեղծում է շահի ու շահամոլության աշխարհակածքը, որին հակադրված է հերոսի համառ Երազանքը: Նա կարեկցում է հերոսին, և սպառիչ նկարագիրը, որին հակադրված է հերոսի համառ Երազանքը: Գրողի ստեղծագործության շատ ուսումնական հերցողն անմասն չի մնում հեղինակի վերաբերմունքից: Գրողի ստեղծագործության շատ ուսումնական հիրոդմեր չեն հավանել այս պատմվածքը: Փորձենք պատմվածքը քննել իբրև «քնական մարդու» լատկերման, ամերիկյան իրականության արտացոլման փորձերի սկիզբ:

Իսկապես դժբախտ մարդ է Վարդանը, որս ապլուս և լուսիք պաշտպահութեալ է նաև շրջապատող ճարպիկ ու ստախոս մարդկանցից: Իսկ ի՞նչ է նրա ուզածն այս աշխարհից ու մարդեն շնորհապատող ճարպիկ ու ստախոս մարդկանցից: Ամուսնանալ և նորոգել պապենական ջրաղացը, որը մնացել է հեռու հայրենիքում: Երկուսն անհրագործելի են: Ժամանակի ամորոք հուրի հետ ջրիկի պատմոքյան պես ջրաղացը վերակառուցելու երազանքն էլ կվորչի, կփշրվի քարե ջունգիների աշխարհում, որտեղ ամեն ինչ, նույնիսկ առուստել կամ չէր կարողացել գեղարվեստական ձև տալ մտածածին, և տարիներ անց երանոսի կերպարով փորձեց լրացնել պակասը: Զգալի է երկու ստեղծագործությունների ամենաէկան տարրերությունը՝ «Վարդան»ում հայն ու հայկական ամրողական նկարագիր չունեն, իսկ «Երանու աղբար»ում ուժեղ է կարոտի, երկիր վերադառնալու հույսը, որը շնչավորվում է անգամ հայրենիքից բերված չոր թթի միջոցով, և այս ամենը հայկական յուրահասուկ շունչ է տախս նկարագրված ամերիկյան միջավայրին: Եթե Վարդանը խղճախ է, և ընթերցողը չի կարող նրան պատկերացնել որևէ վճռական քայլ կատարելիս, ապա Երանոսի մենակությունը հպարտ, հողի, երկրի ձայներով, բույրերով, երազով լցված, շնչավորված վերերկրային կեցություն է, որից հոգեկան ուժ է բխում: Եթե Վարդանը կենդանի ժամանակ արդեն համարյա դիմակ է, ապա Երանոսը մինչև մահ կենտունակ է, կենսասեր ու լավատես: Մահից հետո դրախտ գնալն անգամ չի ուրախացնում հերոսին, որովհետև դրախտը հայրենիք չէր: Հայի կրած տաճանքները բավարար էին դրախտ գնալու համար, բայց Երկիր փնտրող, երկիր վերադառնալու երազանքը փայփայող Երանոսը վերջնականապես կորցրեց հույսն ու «ավելի տիրեցավ»: «Սննը կապրինք ոչ թէ մեր աշխարհին համար, կամ մեղք խուսափելու քիչ մը վաճառական հաշիվ-ներով, այլ կապրինք օր առաջ հասունալու համար երկիրին վայելումին: Ու մեր նահատակությունը մտով կը զատվի ուրիշներն: Ամրող ցեղը խառնված է այս մտալլկումին»՝ գրում է Հ.Օշականը: Համատեղի Երանոսը հաստատում է մեկ այլ ծշմարտություն՝ երազի հարատեսությունը, որի շնորհիվ ապրեց և ապրում է հայ Սփոտը:

Վ. Թորթվենցը «Ամերիկա զացող հարսնացու» պատմաքուլա, սպառագայութեան վիճակ, հակադրում է «կծի անատոն» հարուստին և կարիքի ճիրաններում տառապող աղքատներին, որոնք հարկադրված են ելք փնտրելու, որպես օրենք, գտնում են: «Ենինակն անքաքույց համակրանութեան մասնակցում է դեպքերին, օգնում երիտասարդներին, յուրովի պատժում մեծահարուստ ծերուկին: Համաստեղը հակադրության եզրեր չի ստեղծում, ներկայացնում է ամերիկյան իրականությանը շարմարված, բայց ազգային, մարդկային որոշակի, հստակ նկարագիր չունեցող հայի կյանքից մի քանի դրվագ՝ հերոսի նկատմամբ համակրանքին խառնելով երգիծական մեկ-երկու ուրվագիծ, և Վարդանի նկարագիրն ավելի հավաստի է դառնում: «Վարդան»ից ստացած տպագրության մեջ գերիշխողը թերասացությունն է կամ ավելի միշտ՝ ասելիքի նոր եզրեր փնտրելու անհաջողության փաստը: «Երոսի անկումների ու կորուստների մեջ կա նաև նրա մելոքը, և չի կարելի հանցավոր համարել միայն իրականությունն ու խորք շրջապատը: Վարդանը փաստորեն համառոքն փնտրող, բայց որոնման որոշակի շրջագիծ չունեցող մարդն է, որը շարունակ սխալվելուց և վրիպելուց հետո կրկին հայտնվելու է նոյն հիմար իրավիճակում: Համաստեղի հերոսներից Վարդանն իսկապես առանձնանում է՝ որպես ծախող ված մարդու ծախողված կերպար: Համաստեղի նամակներից մեկում կարդում ենք. «Ծառ ուրախ եղանակ ու հավեած էիր «Երանու աղքարը»: Ծիշտ է թե մենք բոլորս ալ Երանու աղքարի մասեր ունինք, որ հավեած էիր աղքարը շատ կան մեր շորքը: Հետաքրքիր է նման բացասական տիպ մը վերլուծ թերեր փորձ ըրած չեմ մոտենալ բացասական տիպերուն: Հայ գյուղացին զարմանալի կերպով զ

բաղասություն մը ունի իր մէջ, առողջ և անաղարտ պահված՝ «Երանու աղքոր» մէջ առանձնապէս այդ ուզած եմ երևան քերել»:¹⁰ Հավելենք՝ Համաստեղն այդպէս էլ չանդրադարձավ վերը նշված բացասական տիպերին՝ կարծես ճգուելով շտեսնել նրանց և չգոյության դատապարտել։ Հասկանալի ու լիովին արդարացված վերաբերմունք։

Սեծ ու անհոգի աշխարհի խորք զավակներից է նաև Կար ամուն, որն ապրում է անցյալի հիշատակների պատառիկներով («Զոհը Կար Ամուն էր»): Նա բոլոր մանրամասներով հիշում է գյուղը, սիրում խոսել անցյալից, առանձնակի սիրով պատմում երկու գոմենների կովկի մասին: Անցյալից մնացել են երազն ու ահեղագոչ ձայնը, որը սրճարանի հաճախորդներին ծիծաղելի է թվում: Չար դիպվածը հողագործին բաժանում է հողից, գյուղից, այգուց և նետեց օտար ափեր: Այստեղ՝ օտար երկրում, օտար մարդկանց մեջ, Կար ամուն ապրում է միայն երազով՝ դաշտի ու կենդանիների պատկերով: Երազի և իրականության կովում կըկին հաղթեց կուպիտ ու անմարդկային, անհոգի ու անսիրտ իրականությունը:

1921-ին Բուստոնում լույս տեսան Վ. Թոքովենցի պատմվածքների երկու գրքերը, որոնցում ընդգրկված էին նաև Ամերիկան պատկերող մի քանի գործեր, որոնք հետագայում՝ 1929-ին, հրատարկեցին «Ամերիկա» գրքում։ Թոքովենցի հերոսներից շատերը, ինայդած Ամերիկայի հերիաթային հարստությամբ, ամեն գնով ճգտում են հասնել այնտեղ («Ինչպես ծովում խեղդեցի մի մարդու», «Հո՞, հո՞...»)։ Նա ներկայացնում է ամերիկահայ դարձած մարդուն, որի մեջ զնօված են ոչ միայն ազգային, այլև մարդկային գծերը («Հայրենակից»)։ Ա.Հայկազը դիպուկ է բնորթազրել այդ աշխարհը գրերից մեկի վերնագրով՝ «Պանդկ»։ ուր ելումուտ ունեն բոլոր մարդիկ՝ իրենց առօրյա հոգսերով և ազգային նկարագիրը պահելու հուսահատ ճիգերով։

Համաստեղի գրիշն ապելի մեղմ է և զգուշավոր: Նա չի ընդունում «ամերիկահայ» որակումը, մարդու մասին դատում է համամարդկային արժեքների չափանիշներով՝ երբեք չկտրվելով միշտ կենացի ու ոգեշնչող հայրենի եռողից: Գրողի մոտեցումը հենվում է այն փաստի վրա, որ «մեծ զոլումից» մածապուրծ հայության բեկորները պանդխտության առաջին տարիներին դեռ ապրում էին հայրենիք վերադառնալու հույսով և պարզապես գոյատևում «պրոտիմ»: Հետո իրավիճակը կտրուկ փոխվեց, ու հայր կամաց-կամաց հարմարվեց ստեղծված իրավիճակին, բայց հրաման անթիեկ միրասառձի հուար:

«Հայաստանի լեռներու սրբահարը» երաժշտական դրամայի հերոսների գոյության վայրն Ամերիկան է: Ստեղծագործության բանալին ընծայականն է: «Նվեր Ամերիկահայության, որ ծերացավ աչքերուն մեջ բռնած կարոտը երկրին, որ ապրեցավ, երազեց ու երազով դարձուց իր կյանքն իրավական»: Կյանքում, իրականության մեջ զիրկընդիմառն են հերիարի այծեմարդն ու սրինգի իրաշալի նվազի հետ առատություն, սեր տարածող Վարդանը: Օվկիանոսով բաժանված հայրեննիքը հեռու է: Վարդանը և Սաքոն հեռու են, իմշայի պես մոտու է Հայաստան երկիրը՝ երազի պես մոտ ու հարազատ: Սրինգի ծայնը կախարդում է, կանչում, մռայլ, թվում, շատ մոտ... «Ե՞րբ պիտի արթննանք, այս, ե՞րբ պիտի արթնանք» (692), - հարցնում է դրամայի հերոսուիին: Համաստեղը պատասխանում է՝ երբեք: Հայը չի կարող ապրել առանց երազի, և ինչքան լավ է, որ երիտասարդ սերունդն էլ է «վարակված» այդ կարոտախառով: Գրողը փաստորեն այլարանորեն ներկայացնում է հայրենադարձության ծրագրի իր տարբերակը: Գրականագետ Գ. Սևանը հայրենադարձության թեման անվանում է «նոր կարոտի գրականության մեջ պորոկման վեհարու».¹¹

Համաստեղի դրաման աղերսներ ունի Ու. Սարոյանի «Իմ սիրող լեռներում է» պիեսի հետ, որի մասին գրականագետ Ս. Աղարքրյանը գրել է. «Դա կյանքի գորշութունից վեր բարձրանալ ցանկացող բանաստեղծական հոգիների աշխարհն է, այն մարդկանց աշխարհը, որոնք իրենց մեջ կրում են մարդկայնության գամճերը, որոնք մի պահ մոռանում են իրենց ոտքի տակ տարրութերվող հողը և այս ծևով ավելի են նմանվում իրենք իրենց, քան սովորական հարաբերությունների մեջ են արտահայտվում: Այս մոտեցումը՝ խոշորացնող ապակու օգնությամբ առօրյան դարձնել հերիաք, արգելն և հարցադրում է, և՝ պատախան է»:¹² Հայր Խոջի տիկոր հոգեբանություն ունի, նրա վարքագիծը դրանով է պայմանավորված և հայրենիքում, և օտարության մեջ: Համաստեղի դրամայի հերոսների համար շոշափելիության չափ տեսանելի, լսելի են հայրենի լեռնաշխարհի հովվի սրբնագի մելեղին: Կարդիքը, առօրյա հոգսերը պարտադրում են իրենցը, բայց դրանցից ազատ ամեն մի պահ երազինն է, և «Երկիրը, Ամերիկա շատ անգամ իրար կիսառնվին» (691):

Համաստեղն իր հերոսներին, որոնք տասնամյակներ շարունակ համառորեն երազել, կարոտել ու սպասել են, վերադարձնում է Հայրենիք, երկիր, որն առանց իր տարագիր զավակների երազի սուկ հող ու տարածք կլիներ, բայց եղել և մնում է հոգևորի թագավորություն՝ երկնայինի նման տենչալի: Ուրիշ պարզեց կա հայի համար, և Համաստեղը հային վերադարձնում է Արագածի լանջերին փուլած այն երկիրը, որի վրա տիրականորեն իշխում է բիրլիական Արարատը: Դա հայի երկիրն է, հայության թափառական բնելորների հայրենիքը, որը մեր ժողովության օստրումներից է՝ անմենելի,

նիհայտ աշխարհին: Երկորդ աշխարհամարտը կրկին սրեց հայի ու Հայաստանի գոյության-չգոյության հարցը. թուրքական յարազանի արյունոտ ստվերը փովել էր աշխարհասկյուու հայության հոգի-երի վրա: Համաստեղն առաջիններից մեկն է տունդարձի կոչ անում: «Հայաստանի լեռներու սրճարը» պիեսի հերոսները օտար հողի վրա փաստորեն ստեղծել են փոքրիկ հայրենիքը՝ Գյուղը: Չան էլ է այստեղ. գյուղի նկարագիրը լրանում է:

Սիջոյին հանդիպում ենք նաև «Կապույտ հովունք» պատսկաժրուս Վալովկ աստակ և «Ընաշխատը» վիպակում՝ Կարո անունով։ Բնության ծայնով, քաղաքակրթության «չի կարելի» ներից դուրս առաջը, վաղ հասակից սեռի գիտակցում ունեցող այս պատանին մարմնափրում է մարդու բնածին ազատությունը՝ հոգու, մտքի, զգացմունքների, որն իրականության մեջ կաշկանդված է օրորոցից սկսած մինչև վարքութարքի, դաստիարակության ընդունված համընդհանուր օրենքները։ Սիջոն դժբախտ է զյուղացիների չափանիշներով, այնինչ՝ իր ներաշխարհում ազատ, անկաշկանդ, պայմանականություններից հեռու, իրավունքի իր բնածին օրենքներով ապրող մարդն է, որին աշխարհն ու մարդիկ չեն ուզում, չեն կարող հասկանալ, քանի որ շատ են հեռացել իրենց բնական վիճակից, ապրում են պայմանականությունների և ոչ թե իրական աշխարհում։ Այստեղից էլ՝ հերոսի՝ հալածվածի կարգավիճակը, որը, որպես օրենք, ապարտվում է ողբերգությամբ։ Համաստեղի հերոսը նման չէ Հ.Օշականի քռուրներին, որոնց տաճում է «սեռի խնդիրը»։ Սիջոն անուղղելի երազող է՝ մենության մեջ հպարտ և առինքնող։ Նրա կյանքն անհասկանալի ու դատապարտելի է շրջապատողների համար, բայց Սիջոյի մահով գրողը պատժում է հենց այդ մարդկանց՝ ցույց տալով, որ հերթական անգամ կյանքը մնաց առանց հերիարքի, առանց երազի։

Պառավ հորաքրոջ նախատինքներից ու սպանալիքներից հոգմած Կարուկն այրում է երազով, մտովի թշում իր սարքած օդապարիկների հետ և երկնքից նայում գյուղին, կալի աշխատավորներին, ծեռքի ավելով իրեն սպառնացող հորաքրոջն ու... Մարանին, որին ուզում է զարմացել: Հերիաթը շարունակվում է. Մարանը հրապուրվում է հոլունքով, զգում նրա անբացատրելի ջերմությունը և «համելի տիաճությամբ երեսը Կարուկի շրմներին» մոտեցնում: Իրական այս հրաշքը կենարար ջերմությամբ ողղողում է պատանու սիրտն ու հոգին: Կարուկն էլ Վ.Թոքովենցի «Ներման աղոքքի» հերոսի պես երկար կիրշի հերիաթային այդ պահը:

Կարոն, որը մեծանում է գյուղի փողոցներում և շների հետ, չի հաշտվում դպրոցի կարգ ու կանոնի հետ: «Այս փոքրիկ դեր» այդպես էլ տառածանաց չի դառնում, մոր անվերջանալի անեծքներն ընկալում է որպես «բնության մեկ մասը», ագրավի կոնյուն: Գաղափար անգամ չունենալով բարու և շարի մասին՝ գյուղի մերժված Կարոն կրվում է աշխարհի դեմ և ապրում երազների աշխարհում: Երազներն ու իրականությունն իրար մոտեցնողը սերճ է Նազանի՝ Սրապենց փոքր հարսի նկատմամբ: Գյուղը դարձավ այդ անհույս, «ապօրինի» սիրո վկան: Այս տարօրինակ պատամին ուժը, բարությունը, հպատակարմությունը և շրջապատիք անհասկանալի, գյուղացիների համար դատապարտելի սերը գուգակցում է զարմանալի պարզամտության, միամտության հետ:

Գյուղը Կարոյի բազավորությունն է: Նրա կյանքում հեքիաթը շղափելի, տեսանելի գոյսներ ու հերոսներ ունի, որոնցից ամենագաջը ինքն է: Նրա բոլոր արկածներն ավարտվում են Նազանին փախնելու սիրտանքով: Կարոյի օրինակով Վահրամն էլ է հյուսում իր հեքիաթը՝ արևոտ ու արևային աշխարհի մասին: Ինչպես Կարոն է լրիվ ու լիարժեք Նազանով, այնպես էլ Վահրամը երազների դիցուիու Մարանի մթողոցով, նրա շնորհիվ կապվում է հողին, զյուղին: Սենության մեջ («Բոյոր գեղեցիկ բաները մի-

Աակության մեջ ծնունդ կառնեն») Վահրամն ինքն իր հետ է : Ծիշտ է, նա դեռևս չունի Կարոյի վաքագի ազատությունը, բայց ենթագիտակցորեն զգում, հասկանում է, որ երջանկության բանալին «սումնականի իմացականությունը» չէ: Կարոն երբեք դժբախտ չի լինի, քանի որ նրա մեջ «ավելի կտարյալ էր բնության իմացականությունը և մանավանդ ազատությունը» (543): Այդ ազատության երրազյան գույներով են ներկված բնությունը, անուրջները, բարերո:

Սկսվում է առաջին աշխարհական պատերազմունքը:

դի Գյուղն էլ դատարկվում է, կուզ գալիս, կորցնում նախկին աշխուժությունը. «Գյուղը նման էր կոտորված քենքով խոշոր բռչունի մը, որ ինկած էր» (575): Չարդարացավ Օվան Աղայի հույսը, թե «էս ազամ կուգա քեղին» (583): Ինչպես «Սայստակ Ձիավոր» վեպում, կոտորածի ու տեղահանության դեպքերին առնչվող մի քանի պատմվածքներում Համաստեղը խոսափում է արյունոտ տեսարանների ու դակի նկարագրությունից՝ հավատարիմ մնալով գեղագիտական մի հիմնական սկզբունքի՝ բարոդուրս ամեն ինչ անցողիկ է ու իջատակության արժանի չէ: «Առաջին սերը» վիպակում Համաստեղը մի քիչ «շեղվում է» այդ սկզբունքից: Երբ իշուկին էլ են «զորակոչում», Օվան Աղան կատակում է. «-Հիմա, Շուշան, բանը էնտեղ հասած է, որ էշերն ու զորինները պիտի փրկեն թուրքիան: Կարևոր նկատեցին, որ մեր խելոք էշն ալ մասնակցի իր խելքով» (588): Համաստեղի գրականության մեջ սա միակ քաղանցիկ արտահայտությունն է, որով բռութագրում է մեր ազգային ողբեկորության կազմակերպությունը:

Հորիզոնում հույսի պես հայտնվում է Ամերիկան՝
Ասածոք երած առաջնահարձությունը:

«Կյանքը իր տիրության մեջ իսկ գեղեցիկ է»։ աս «քնական մարդու» կենսասիրության և կենսունակության մեջ առանձին պահանջական է։ Տարիներ անց Վահրամը համոզվում է, որ Մարանն էլ տեսած դժոխքից հետո ապրում է «կյանքին դեմ պայքարելու» ու «ատելություննեն եկած զավակներուն» հանդեպ մայրական մենահաղթ բնագդով։ Հային հատուկ մարդասիրությամբ՝ տառապանքների ծովով անցած Վահրամը անեօք չունի ոչ ոքի հանդեպ, շնորհակալ է երկնային պարզեի։ Մարանի սիրո ու այդ սիրո հիշատակով ապրելու երջանկության համար։ Այդ սիրո մեջ ամփոփվում է մի ողջ աշխարհ՝ գյուղ, պատանեկություն, կողցրած երջանկություն, հայրենիք։

Վահրամը զնահատում է կատարված՝ հասկանալով, որ «տկարություն» է Ամերիկայում ամեն օր անցյալի հիշատակները փնտրելու: Նա պատրաստ է բուժվել: Բուժումը Հայաստանն է, հայրենիք վերադառնալը: «Ուզելով ոչ հայրենիք կատեղծվի և ոչ ալ ազատություն: Պետք է պայքարիլ, արյուն տանիլ: Այդպես ստեղծված են բոլոր ազատ հայրենիքները» (632), - ասում է Վահրամը: Պատմության դասերը՝ Ավարայրից մինչև 20-րդ դարավերջի մեր ազատամարտը, սովորեցնում են, որ մեր երկիրն էլ «օր մը պիտի տիրանա իր հոգեկան ազատության» (633): «Այր մի խնդիր ունի՛ այդ պայքարի մասնակիցը լինել: Վահրամը գալիս է Հայաստան, որ հայ ժողովրդի հետ տանի «արևոտ օրերն ու լուս տառապանքները» (640): «Բնական մարդու» գոյության միակ վայրը հայրենի հողն է: Համաստեղի այս եզրակացությունն այսօր առավել քանի այժմեական հնչողություն ունի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լուս է տեսել 1924-ին, Բոստոնում:
 2. Լուս է տեսել 1929-ին, Փարիզում:
 3. Համաստեղ, «Քաջն Նազար և 13 պատմվածքներ», Կահիրե, 1955, էջ 255-260:
 4. Ն.Աղայան, Թորովենց, Ե., 1994, էջ 263:
 5. Համաստեղ, «Հայաստանի լեռներու սրբահարը», Ե., 1989, էջ 350: Գրքից հաջորդ մեջքերումների էջերը նշվում են տեքստում՝ փակագծերում:
 6. «Ժումանջան. ուսումնասիլուրյումներ և հրապարակումներ», հ. 5, Ե., 1998, էջ 36::
 7. Վ.Անանյան, Երկեր 4 համուրով, հ.1, Ե., 1984, էջ 222:
 8. Վ.Ծուշանյան, «Երկիր հիշատակաց», Ե., 1966, էջ 283:
 9. <Օշական, «Մնացորդաց», հ. Գ, էջ 45:
 10. Գ.Աթ, <Ավագյանի ֆոնդ, թիվ 1310:
 11. Գ.Սևան, «Ափյուսքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946-1985)», Ե., 1997, էջ 95:
 12. Ս.Աղաբարյան, «20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում», Ե., 1983, էջ 257:

Դ. Դեմիքը անհ ծննդյան 125 - ամյակի առիկը

Դ. ԳԵՍԻՐՃԱՆԻ «ԶԱՐԳՅԱՀ» ՊԱՏՄՎԱԾՔԸ ՆՈՐ ԸՆԹԵՐՑՄԱՆՔ

Հ. Աղամյան

Արվեստի իսկական երկերը, մեծ, թէ փոքր կտավի, բոլոր ժամանակների համար արդիական հնչեղության ակնհայտ կամ ներդաքույց լիցքեր են ունենում: Այդպիսին է նաև մեծանուն գրող Դերենիկ Դեմիրճյանի «Չարգյահ» պատմվածքը, որին ուսումնասիրողները, ասես խորքները մեկ արած, անդրադարձել են մակերեսորեն, նրա պարունակած գեղարվեստական հարստության մեջ խորամուխ շլինելով, երբեմն նույնիսկ միայն վերնագիրը նշելով: Նրա պատճառները զաղափարախոսական էն եղել, և շարժե դրանով գրադիվել: Ասենք միանգամից, որ «Չարգյահն» իրականում արվեստի մի փոքրիկ գլուխգործոց է և գրական գեղագիտական հաճույք պատճառելուց բացի կարող է օգտագործվել նաև դիդակտիկ նպատակներով՝ իր ստեղծագործական մեթոդի յուրակերպությամբ, ոճի անակնկալ գեղեցկություններով ու արտահայտչական միջոցների հարստությամբ՝ բնագրի գրականագիտական վերլուծության արդյունավետ նյութ դառնալու: Աևանական իմաստությունը համար անդրադառնանք պատմվածքին:

1920 - 30 - ական թվականներին խորհրդահայ գրականության մեջ բուռն հետաքրքրություն էր առաջացել Արևելքում տիրող հետամնացության ու բռնությունների հանդեպ: Գրվում էին պոեմներ, լեզենդներ ու բալլադներ, բանաստեղծություններ (Գեղամ Սարյան, Ազատ Վշտումին և ուրիշներ): ԵՎ այդ թեմատիկային Դեմիքյանի նվիրած գործերից լավագույնը «Չարգյահն» էր, որի մեջ նա միայն բռնության զոհերին չի ներկայացնում, այլև այդ բռնության դեմ ծագած հեղափոխությունը: Իսկ ըստ պատմագրության, դա «20 - րդ դարի սկզբի առաջին հեղափոխությունն էր Արևելքում և ամենախոշոր իրադարձությունը Իրանի պատմության մեջ»: Իրանի պատմությունը Դեմիքյանը գիտեր հեռավոր ժամանակներից: Հայ - պարսկական հարաբերությունների հետ անմիջական առնչություն ուներ 1912թ. նրա գրած «Վասակ» դրաման (և դեռ մի տասնամյակ հետո պիտի գրեր «Վարդանանց պատերազմը» պատմագիտական ակնարկը, որի հիմնան վրա էլ՝ «Վարդանանքը») և անտեղյակ չէր կարող լինել 1905 - 1911թթ. իրանական հեղափոխությանը, որի պատճառներն ըստ պատմագիտության «... հակասությունների սրումն էր մի կրղմից միջազգային իմպերիալիզմի աջակցությունը վայելող կառավարող ֆեոդալական խմբավորման՝ դաշտական դինաստիայի, մյուս կրղմից՝ սաղմնավորվող ազգային բուրժուազիայի, գյուղացիության, արհեստավորների և բանվորների միջև»: Հեղափոխությունը ունեցել է երեք շրջան: Նրա բարձրակետը Թավրիզի ապստամբությունն էր (Երկրորդ շրջան, 1908 - ի հունիսից 1909 - ի հուլիս), որը դեկավարում էին Քեռին (Արշակ Գավաֆյան) և Սարբար խանը... 1909 - ի լուսնին Գիլանի ֆիդայինները, հայ կամավորները և սահմանավորականները՝ Եփրեմ խանի և Ռեշտի նահանգապետ Միխաղյարի ղեկավարությամբ, բախտիարները՝ Սարդար Ասադի գլխավորությամբ... գրավեցին Թեհրանը, կանխեցին միապետության վերականգնումը: Սակայն անգլոռուսական, բուղդական ինտերվեցիան և ներքին հետապնդմական ուժերը ճնշեցին հեղափոխությունը, (ՀՍ հանրագիտարան, հ 4, Ժ 452 - 453):

Այս նույն աղբյուրում նշվում է նաև, որ ըստ պարսիկ պատմաբան Էքրահիմ Սաֆայիի իրանական հեռավորության 24 նշանափոք գործիքներից 16 - ը իսայ էին, և այդ հեղափոխության շնորհիվ հայերը ընտրվեցին տեղական մարմիններում, ինչպես նաև իրավունք ստացան երկու պատգամավոր ունենալ Խանի մեջիսում (Էջ 453):

1905 - 1911 թթ. իրանական հեղափոխությանը հայերի այսպիսի գործուն մասնակցությունը մինչև անգամ կարող էր ազդակ դառնալ Դեմքրատյանի համար՝ կերտելու նաև հայազգի կերպարմեր, բայց նա պատմվածքում ոչ թե բուն հեղափոխությունը, որա վերելքը, այլ պարտությունն ու նրա ժաման հետևանքը ներք, դաժան հաշվենարդարներն է Անդրկայացնում հեղափոխականների և աշխատավորական խավերի հանդեպ և նոր ու անորոշ խնդրումները: Պատմվածքում նկարագրվում է հեղափոխության դահիճներից մեկի՝ Իրրակիմ խանի քարավանի «հաղթական» երթը անապատում, վերադարձը դեպի բռնությունը վերականգնված թեհրան:

Բազմամարդ քարավանում իրեն երջանիկ է զգում Իրրահիմ Խանը. Առողջ են կախաղան հանել նրա ամբարները հրդեհած երեք նշանավոր հեղափոխականների: Այդպիսի տեսարաններից հետո նա մի քանի օր քարի է դառնում, ուրեմն թող իմանան բոլորը, նաև՝ քարավանում գտնվող քիրմանշահցի վաճառական Հյուսեինը, գրագիր և փիլիսոփա ծերուկ Բուրժասնը, շվենդացի լեզվարան պարակագետը: Տունուտեղը